

րանար, կը շարունակեաւ ընթերցումդ. սիրահարուած ես իր էջերուն, ուր կը զըտնես ազնուական հոգի մը, սրտիդ հետ խօսող լեզու մը, միտքդ հմայող աւիւն մը: Եւ շատ անգամ կը համոզուիս, որ սովորական գրիչներէն վեր, արձակ բանաստեղծ մըն է: Եւ ամենէն լուրջ փիլիսոփայական և հոգեբանական հարցերու մէջ, յանկարծ կը տեսնես զինքը անզուսպ խանդէն ընկճուած՝ երևակայութեան անձնատուր, նկարչական էջեր կը ստեղծէ, այդ տեղ վականերն են, Շէքսպիրեան և Պայրսնան. դիտեցէք սա պատկերին գեղեցկագիտական ձեւը և հոգեկանը.

«Ստանաները գնդակ են խաղում հանձարների գանգերով, զաւակները լափում են հայրենի աճիւնների մէջ քսած կանաչին, կոյսերը իրենց փարթած կրճերի վրայ կրում են գերեզմանի հողից ծլած վարդը և մահաւան հակայական ջղջիկը հողմահարում է մարդկութեան դալուկ ճակատը: Կատաղի անգղերը բզկտում են աշխատաւորի թրթռուն սիրտը և ագահօրէն խմում են նրա տաք արիւնը, ձիւրի սմբակները թաղում են բացւած կրճերի մէջ, և երկաթէ պայտերը փշրում են վիթաւորների գանգերը»:

Ահաւոր է այս պատկերը, քեզ կը յիշեցնէ Պալերնի ստանանները, վակաների վճուկները, Շէքսպիրի ուրուականները և Տանդէի վիշապաթեւ ջղջիկները: Եւ այդ Եսարեկիչ պատկերին մէջ զրկուածին, չարատանջ բանւորներու խնդրը եւ պաշտպանութիւն բանւորներու հարցը չէ մոռցուած բնաւ. անոնք են կարծես կեանքի վէրքերը, արդարութիւնը պէտք է որ վերջապէս գթութեան բալասանով բուժէ այդ մեծ վէրքը, թէ ոչ կը սպառնայ այդ վէրքը, ամբողջ աշխարհի պատուհասը կը դառնայ. բանւորը ալ իր բերնին մէջ ըմբոստութեան երգ մ'ունի, քրանաթոր կրակին դիմաց կ'երգէ, խոնաւ նկույններուն մէջ մրտաւ խոշտանգուած կ'երգէ. գործատանց թունաւոր օդին մէջ հիւժած կ'երգէ, բերանը դժոխքի դուռն է դարձած,

ձած, ուսկից վրէժինդրութեան կրակը կը պողթկայ.

«Մենք երգում ենք ու ծառանում. չէ մենք շատ ենք աշխատել ու միշտ ենք քաղցած. ճանապարհ, ճանապարհ նրանց, որոնք տքնել են՝ առանց վայելելու, աւրին — քրտինք են թափել ու միշտ դրժբաղդ են, որոնք վաստակել են ու լացել, քաղցից ապարանքներ են կերտել անապաստան միալու համար ճանապարհ, աշխատանքն է անցնում հզօր ու ստեղծագործող, որ այլ ևս քաղցած չէ ուզում միալ: — Ծանապարհ»:

Աշխատանքն է խօսողը, բանւորը երբ կ'աշխատի և գիտէ յարգը աշխատանքին, գիտէ յարգը տաժանակիր տուայտութեամբ ձեռք ձգած դրամին. ռամկապետական վահագուն մըն է ան, աշխատանքի ասպետը. ծոյլ, դատարի ազնուապետական՝ պէտք է խոնարհի անոր անջէ, պէտք է ճամբայ տայ որ անցնի, իրմէ վեր բարձրանայ, իր վրայ իշխէ:

Աշխատանքը կեանք է, փառք է: Պ. Ահարոնեան կ'աստուածացնէ այդ հոգեկան կուռքը, որուն տաճարին մէջ թագակիր և բռնակիր հաւասար արժէք ունին:

b.



«ՎԱՆԵԿԱՆ» Ի ՍՏՈՒԳՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Հիւպըման այս բառը կը ստուգարանէ պարսկերէն դահլու (տան) բառէն. ըստ այսմ Վահեկանը՝ հին մասնակ զործածուած միութեան տասներորդ մասն էր: Բայց ինչպէս մեկնել և տառի յաւելուածը՝ հայերէնի մէջ (Վահեկան)՝ Միւս կողմէն ծանօթ է (Հիւրոգոտոս Գ, 96) Թէ Դարեհ Ա. եղաւ զրաւի կանոնաւոր զործածութեան ընդհանրացնողը. «Le denrique d'or ou d'argent n'eut jamais plus de trois centièmes d'alliage» (Հին Հայոց Պատմութիւն, Դօք Երկրորդ և Ա. Գալ, ԺԵԹԳ, էջ 86): Կարելի չէ՝ ենթադրել՝ Թէ մեր Վահեկանն քառը Վարեհկանն էր համապատասխան ըստայ:

8.